ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 22

ՀՀ մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

22.09. 2020թ. **ք.Վանաձոր**

Մասնակցում էին

Գ.Մարկոսյանը- -մարզպետի տեղակալ

Վ.Խաչատրյանը -մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալ

Ա.Բեջանյանը, Ռ.Հարությունյանը, Կ.Աշրաֆյանը, Վ.Ջաղինյանը, Վ.Ղարսայանը, Է.Հախվերդյանը, Ա.Թումանյանը, Ա.Սահակյանը, Ս.Ղուբաթյանը, Կ.Ադամյանը, Ա.Գասպարյանը, Ս.Գրիգորյանը - ստորաբաժանումների ղեկավարներ

Լ.Ասլանյանը - մարզպետի խորհրդական

Հ.Այվազյանը -մարզպետի խորհրդական

Ռ.Խանզադյան -մարզպետի օգնական

Ռ.Մարգարյան -փորձագետ

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին

(Փոխմարզպետ՝ Գայանե Մարկոսյան)

2. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին

(Մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Վալերի Խաչատրյան)

3. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին

(Լոռու մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ)

4. Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Գ.Մարկոսյանին, Լոռու մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Բեջանյանին՝

Անհրաժեշտ վերահսկողական իրականացնել մարզի համայնքների կողմից սեփական եկամուտների հավաքագրման բարձր տոկոս ապահովելու և տարեկան պլանային ցուցանիշների ապահովման ուղղությամբ:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Բեջանյանին, մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ռ.Հարությունյանին՝

Համատեղ քննարկել ֆինանսական խնդիրներ ունեցող ուսումնական հաստատությունների հարցերը և առաջարկություններ ներկայացնել ֆինանսական վերաբաշխումների վերաբերյալ:

/ ժամկետ՝ 1 շաբաթ /

3. ՀՀ Լոռու մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի պաշտոնակատար Վ.Ղարսայանին, մարզպետարանի փորձագետ Ռ.Մարգարյանին՝

Անհրաժեշտ հսկողություն իրականացնել մարզում իրականացվող խնդրահարույց սուբվենցիոն ծրագրերի կատարման նկատմամբ և պարբերաբար ներկայացնել տեղեկատվություն, անհրաժեշտության դեպքում քննարկումներ կազմակերպելու նպատակով հրավիրել շինարարական կազմակերպությունների ներկայացուցիչներին:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատար Լ.Վարդանյանին, մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Բեջանյանին, հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Է.Հախվերդյանին՝

Համատեղ ուսումնասիրել և ներկայացնել ամբողջական տեղեկատվություն Լորուտի և Ահնիձորի բուժկետերի վերանորոգման և այլ խնդիրների լուծման վերաբերյալ:

5. ՀՀ Լոռու մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ Ա.Սահակյանին, մարզպետարանի քաղաքաշինության պետի պաշտոնակատար Վ.Ղարսայանին, հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Է.Հախվերդյանին՝

Համատեղ ուսումնասիրել և 1-շաբաթյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն ապօրինաշինությունների և հայտնաբերված խախտումների վերաբերյալ:

6. ՀՀ Լոռու մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ա.Թումանյանին՝

ա/ Ներկայացնել ամբողջական և համեմատական տեղեկատվություն բերքահավաքի արդյունքների վերաբերյալ: : /ժամկետ՝ 15.10.2020թ. /

բ/ Ներկայացնել տեղեկատվություն մարզի հողօգտագործողներին տրամադրված սերմացուների վերաբերյալ:

/նախնական ժամկետ՝ 01.10.2020թ. - վերջնական ժամկետ՝ 15.10.2020թ. /

7. ՀՀ Լոռու մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Է.Հախվերդյանին՝

1-շաբաթյա ժամկետում ներկայացնել Կառավարության որոշման նախագիծ Սպիտակ համայնքի թիվ 2 դպրոցի տարածքում բնակվող ժամանակավոր բնակիչների բնակապահովման վերաբերյալ:

8. ՀՀ Լոռու մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Հ.Գասպարյանին՝

ՀՀ Զարգացման ռազմավարության դրույթներից ելնելով ուսումնասիրել մարզի զարգացման գործող ռազմավարությունը և ծրագիրը, անհրաժեշտության դեպքում կազմակերպել քննարկումներ և ներկայացնել առաջարկություններ՝ զարգացման ռազմավարության մշակման ու փոփոխման վերաբերյալ:

/ժամկետ՝ 3 ամիս /

9/23/2020

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99